ԵՂԵԳԻՍ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Հակոբյան
Հեռախոս՝ +37477.09 26 80

Գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Եղեգնաձոր քաղաքից մոտ 18 կմ հեռավարության վրա, Երևանից՝ 135կմ։

Գյուղի հիմնադրման մասին կոնկրետ տեղեկություններ չկան։ Այն փռված է Եղեգիս գետի ձախ ափի սարալանջին, ծովի մակերևույթից 1640մ բարձրության վրա։ Կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ։

Գյուղն ունի բնական հրաշալի տեսարաններ, պատմամշակութային արժեք ներկայացնող բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր, որոնք կարող են խթան հանդիսանալ տուրիզմի զարգացման համար։

Միջնադարյան Եղեգիսը Հայատասանի ամենահարուստ համայքներից է եղել։ 13-14 դարերում այն եղել է Օրբելյան իշխանական տոհմի նստավայրը։ Գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը կառուցվել է 1703թ. ավելի հին եկեղեցու ավերակների վրա, իսկ սուրբ Կարապետ, Զորաց եկեղեցիները 13-րդ դարի կառույցներ են։
Զորաց եկեղեցում է կատարվել ռազմի դաշտ մեկնող զորքի երդման և օրհնության արարողությունները։ Գյուղի հարակից տարածքում հայտնաբերվել է 13-րդ դարի թվագրությամբ հրեական գերեզմանատուն։

15-րդ դարում Լենկ Թեմուրի և այլ զավթողական արշավանքներից, այնուհետև երկրաշարժի հետևանքով ավերվել է քաղաքը: Ավելի ուշ գյուղում բնակություն են հաստատել թուրքալեզու բնակիչներ և այն անվանել՝ Ալայազ: Գյուղն Ալայազ անվանումով եղել է Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառի կազմում: Վերանվանվել է Եղեգիս 1991 թ. ապրիլի 3-ին:
1988թ. Սումգայիթյան դեպքերից հետո գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներով։ Վերականգնվել է պատմական Եղեգիս բնակավայրի անվանումը։

Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ։ Գործում է քարի մշակման արտադրամաս:
Գյուղն ունի դպրոց, բուժկետ, գրադարան։

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Եփին գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 101 հուշարձան։